

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)
ԿՐԹՈՒԹՅԱՆ**

0913.01.4 «ՀԻՎԱՆԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԱՄՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

0913.01.01.4 «ԿՐՏՍԵՐ ԲՈՒԺՔՈՒՅՐ/ԲՈՒԺԵՂԲԱՅՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2016

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Առեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների											
		Քնն.	Ստուգաթղթ.	Կուրսաշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս							
					Ընդամենը	Այդ թվում			1-ին կիս.	2-րդ կիս.	3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.						
						Տես. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմինար պարապմունք	շաբ.	շաբ.	շաբ.	շաբ.	16	16						
						շաբ.	շաբ.			շաբ.	շաբ.									
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ																			
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5,6տ		72	54	18								38	34				
2.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6տ		18	14		4												18
3.	Իրավունքի հիմունքներ		5,6տ		36	30		6							24	12				
4.	Պատմություն		5տ		36	32		4							36					
5.	Օտար լեզու		5,6տ		60	20	40								30	30				
6.	Ֆիզիկական կուլտուրա		5,6տ		64	4	60								32	32				
7.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		5,6տ		36	22	14								20	16				
8.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		6տ		28	26	2													28
	ԸՆԴԱՄԵՆԸ				350	202	134	14							180	170				
2.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ																			
1.	Հաղորդակցություն		5տ		36	16	20								36					
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		5տ		36	12	24								36					
3.	Համակարգչային օպերատորություն		6տ		36	4	32													36
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	32	76								72	36				
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ																			
1.	Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա		5տ		54	24	30								54					
2.	Մարդու կենսագործունեության փուլերը՝ մանկան զարգացում, հասուն և ծեր հասակ		5տ		54	20	34								54					

3.	Մանրէաբանություն, ընդհանուր հիգիենա և համաճարակաբանություն	5տ	72	28	44					72	
4.	Դեղաբանություն	5տ	18	4	14					18	
5.	Ընդհանուր հոգեբանության հիմունքներ	5տ	18	2	16					18	
6.	Սնուցում՝ առողջ սնունդ և դիետոլոգիա	5տ	36	12	24					36	
	ԸՆԴԱՄԵՆԸ		252	90	162					252	
4.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ										
1.	Հիվանդի ընդհանուր խնամք	5տ	72	14	58					72	
2.	Հիվանդի խնամքը թերապիայում և հերիատրիայում	6տ	54	18	36						54
3.	Հիվանդի խնամքը վիրաբուժությունում	6տ	36	6	30						36
4.	Հիվանդի խնամքը մանկաբարձությունում և նեոնատոլոգիայում	6տ	36	6	30						36
5.	Հիվանդի խնամքը վերականգնողական թերապիայում	6տ	36	12	24						36
6.	Հիվանդի խնամքը հոգեբուժարանում	6տ	36	12	24						36
7.	Անաշխատունակություն, սահմանափակ կարողություններով անձանց /հաշմանդամների/ խնամք	6տ	36	6	30						36
8.	Վարակիչ, մաշկային եվ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով պացիենտի խնամք	6տ	36	12	24						36
9.	Աղետների բժշկություն	6տ	36	12	24						36
10.	Ամոքիչ օգնություն, պացիենտի և նրա հարազատների կրթում, կրտսեր բուժքրոջ գործողությունները պացիենտի մահվան դեպքում	6տ	36	12	24						36
	ԸՆԴԱՄԵՆԸ		414	110	304					72	342
5.	ԸՆՏՐՈՎԻ		24								24
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		4								4
	ԸՆԴԱՄԵՆԸ		1152							576	576
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		100								

Շաբաթվա ժամերի քանակը													36	36
-----------------------	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	----	----

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱՎԺԵՇ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱՌՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ	
1.	Տարիքային հոգեբանություն		1.	Համակարգչային	
2.			2.	ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների	
			3.	աղետների բժշկության	
			4.	քույրական գործի և հիվանդի ընդհանուր խնամքի կազմակերպման	
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5.	թերապիայի նախակլինիկական
1.	Ուսումնական	5,6	4	6.	մանկաբուժության նախակլինիկական
2.	Նախաավարտական	6	3	7.	վիրաբուժության նախակլինիկական
3.				8.	վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի
				9.	
	ԸՆԴԱՄԵՆԸ				ԼԱՌՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ			1.	Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի	
Համալիր պետական քննություն՝ ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից / հուլիսի 6-ից հուլիսի 12-ը /			2.	մանրէաբանության	
			3.	հիգիենայի	
			4.	դեղաբանության	
				ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ	
			1.	Մարզադահլիճ	
			2.	մարզահրապարակ	

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԳՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-4-16-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական աշխատանք՝ 20 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,

	<p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու</p>

	<p>պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու</p>

	<p>պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման

	<p>ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-4-16-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),

	<p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված</p>

	<p>միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) տարբեր կտորվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-4-16-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 32 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կիրառի համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն, 6) աշխատի համացանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները բնութագրում է, 2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները, 3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից, 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը, 6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է փաստաթղթի տպագրում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստել է, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարելում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ, 4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Պատրաստել և խմբագրել աղյուսակներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է, 2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ, 3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ, 4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու:

	<p>գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարազարդում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, 2) գծագրում է կանոնավոր պատկերներ, 3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 5) գծագրում է տեքստային բլոկներ, 6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>

Ուսուցման ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,

	<p>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</p> <p>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</p> <p>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</p> <p>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ»

Մոդուլի դասիչը	ՀԸԽ-4-16-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ ընդհանուր գիտելիքներ հյուսվածքների տեսակների, առանձին օրգան համակարգերի, կառուցվածքի ու գործառույթների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հյուսվածքների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, 2) ներկայացնի հենաշարժիչ համակարգի կառուցվածքը, գործառույթները, 3) ներկայացնի շնչական, սիրտ- անոթային համակարգերի անատոմիական կառուցվածքը, գործառույթները, 4) ներկայացնի մարսողական, միզասեռական համակարգերի անատոմիական կառուցվածքը, գործառույթները, 5) ներկայացնի նյարդային, ներզատիչ համակարգերի, զգայարանների անատոմիական կառուցվածքը, գործառույթները:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հյուսվածքների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էպիթելային հյուսվածքի տեսակները, գործառույթները, 2) ճիշտ է ներկայացնում շարակցական հյուսվածքի տեսակները, գործառույթները, 3) ճիշտ է ներկայացնում մկանային հյուսվածքի տեսակները, գործառույթները, 4) ճիշտ է ներկայացնում նյարդային հյուսվածքի տեսակները, գործառույթները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կառաջադրվի թեստային աշխատանքներ հյուսվածքների կառուցվածքի, ֆունկցիաների, դասակարգման և

	<p>առանձնահատկությունների վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • էպիթելային հյուսվածքի դասակարգումը, ենթատեսակները, տարածվածությունը օրգանիզմում, • շարակցական հյուսվածքի դասակարգումը ենթատեսակները, տարածվածությունը օրգանիզմում, • մկանային հյուսվածքի դասակարգումը ենթատեսակները, տարածվածությունը օրգանիզմում, • նյարդային հյուսվածքի տարածվածությունը օրգանիզմում: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում թեստերին:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, պատրաստի պատրաստուկներ, մանրադիտակ, ուսումնական տեսանյութ, ցանկալի է տեսաֆիլմերի դիտումը:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել հենաշարժիչ համակարգի կառուցվածքը, գործառույթները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մարդու կմախքի բաժինները, գործառույթները, 2) ճիշտ է ներկայացնում ոսկրերի տեսակները, միացման ձևերը, 3) ճիշտ է ներկայացնում իրանի, վերին և ստորին վերջույթների, գլխի կմախքի բաժինների կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում գլխի, պարանոցի մկանների տեսակները, տեղադրությունը, գործառույթները, 5) ճիշտ է ներկայացնում կրծքավանդակի, որովայնի, մեջքի մկանների տեղադրությունը, գործառույթները, 6) ճիշտ է ներկայացնում վերին և ստորին վերջույթների մկանների տեսակները, տեղադրությունը, գործառույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի թեստային աշխատանքներ հենաշարժիչ համակարգի տարբեր բաժիններից, գործնական առաջադրանքները նախատեսում են ցուցադրել ոսկրերի տեսակները, նկարագրել նրանց կառուցվածքը, անատոմիական դիրքը, կմախքային մկանների կառուցվածքը:</p>

	<p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել ոսկրերի տեսակները, կառուցվածքը, • ողնաշարի և կրծքավանդակի կառուցվածքը, • ողնաշարի մկանների դերը շարժումներում, • վերին և ստորին վերջույթների մկանների շարժման առանձնահատկությունները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, կմախք, առանձին ոսկրեր, ուսումնական տեսանյութ, ցանկալի է տեսաֆիլմերի դիտում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել շնչական, սիրտ-անոթային համակարգերի անատոմիական կառուցվածքը, գործառույթները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում շնչական համակարգի բաժինները, նրանց կառուցվածքը, գործառույթները, 2) ճիշտ է ներկայացնում բրոնխների, ավելուների կառուցվածքը, գործառույթները, 3) ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի բաժինները, նրանց կառուցվածքը, գործառույթները, 4) ճիշտ է ներկայացնում անոթների տեսակները, նրանց կառուցվածքը, գործառույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի թեստային աշխատանքներ շնչական և սիրտ-անոթային համակարգերի օրգանների կառուցվածքից, գործնական առաջադրանքները նախատեսում են ցուցադրել դիտողական պարագաների վրա շնչական և սիրտ-անոթային համակարգերի օրգանները:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • վերին շնչական ուղիները, ձայնաճեղքը, շնչափողը,

	<ul style="list-style-type: none"> • բրոնխեալ ծառը, բրոնխները, ավելոլները, • պլևրալ թաղանթները, պլևրալ խոռոչը, • սրտի կառուցվածքը, սրտամականի աշխատանքի առանձնահատկությունները, • զարկերակների, երակների, մազանոթների կառուցվածքային առանձնահատկությունները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութ, ցանկալի է տեսաֆիլմերի դիտումը:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել մարսողական, միզասեռական համակարգերի անատոմիական կառուցվածքը, գործառույթները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մարսողության համակարգի բաժինները, կառուցվածքը, գործառույթները, 2) ճիշտ է ներկայացնում ստամոքսի, 12 մատնյա աղու տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, 3) ճիշտ է ներկայացնում բարակ աղիների, հաստ աղու տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, 4) ճիշտ է ներկայացնում միզային համակարգի օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, 5) ճիշտ է ներկայացնում սեռական օրգանների տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի թեստային աշխատանքներ մարսողական, միզասեռական համակարգերի օրգանների կառուցվածքից, գործնական առաջադրանքները նախատեսում են ցուցադրել դիտողական պարագաների վրա մարսողական, միզասեռական համակարգերի օրգանները:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • բերանի խոռոչի, կերակրափողի, ստամոքսի, 12-մ. աղու կառուցվածքային առանձնահատկությունները, • բարակ և հաստ աղիների կառուցվածքային և գործառույթային առանձնահատկությունները,

	<ul style="list-style-type: none"> մարտողական գեղձերի կառուցվածքը և գործառույթային առանձնահատկությունները, երիկամների կառուցվածքային առանձնահատկությունները, միզագոյացում, սեռական օրգանների կառուցվածքային առանձնահատկությունները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութ, ցանկալի է տեսաֆիլմերի դիտում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել նյարդային, ներզատիչ համակարգերի, զգայարանների անատոմիական կառուցվածքը, գործառույթները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի նշանակությունը, կառուցվածքը, դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում կենտրոնական, ծայրամասային նյարդային համակարգերի կառուցվածքը, դասակարգումը, գործառույթները, 3) ճիշտ է ներկայացնում ներզատիչ գեղձերի տեղադրությունը, կառուցվածքը, գործառույթները, 4) ճիշտ է ներկայացնում տեսողական օրգանի կառուցվածքը, տեղադրությունը, գործառույթները, 5) ճիշտ է ներկայացնում լսահավասարակշռության օրգանի կառուցվածքը, տեղադրությունը, գործառույթները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողին կառաջադրվի թեստային աշխատանքներ նյարդային, ներզատիչ համակարգերի, զգայարանների կառուցվածքից, գործնական առաջադրանքները նախատեսում են ցուցադրել դիտողական պարագաների վրա նյարդային, ներզատիչ համակարգերի օրգանները, զգայարանները:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • գլխուղեղի կառուցվածքը /թաղանթները, կեղևային, ենթակեղևային հատվածները/,

	<ul style="list-style-type: none"> • հիպոֆիզի, վահանաձև գեղձի, ենթաստամոքսային գեղձի կառուցվածքային առանձնահատկությունները • մակերիկամների, սեռական գեղձերի ներզատիչ բաժինների կառուցվածքային առանձնահատկությունները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերին և ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութ, ցանկալի է տեսաֆիլմերի դիտումը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ՝ ՄԱՆԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՀԱՍՈՒՆ ԵՎ ԾԵՐ ՀԱՍԱԿ»	
Մոդուլի դասիչը	ՀԸԽ-4-16-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել նորածնային, կրծքի հասակի երեխաների անատոմո- ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, վերարտադրողական, կլիմակտերիկ շրջանների առանձնահատկությունները, տարեց և ծերունական տարիքի անատոմո-ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, հիմնական պահանջները, դրանց բավարարման, ինչպես նաև առողջության պահպանման, ամրապնդման ուղիներն ու եղանակները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ՀԸԽ-4-16-001 «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	<ol style="list-style-type: none"> 1) նկարագրի նորաձնային շրջանը, այս շրջանի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, նորաձնի կենսական պահանջները, 2) ներկայացնի անհաս նորաձնի անհասության նշանները, իրագործել անհաս նորաձնի խնամք և կերակրում, կրծքի հասակի երեխաների անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, զարգացման օրինաչափությունները, հիմնական պահանջները, կոփիչ միջոցառումները, սնուցման եղանակները, 3) ներկայացնի ֆիզիոլոգիական հղիության նշանները, ընթացքը, տևողությունը, հղի կնոջ հիմնական պահանջները, անձնական հիգիենան, ռացիոնալ սնուցման ռեժիմը և շարժողական ակտիվության կարևորությունը, 4) ներկայացնի կանանց և տղամարդկանց օրգանիզմում ընթացող փոփոխությունները կլիմակտերիկ շրջանում, առողջ ապրելակերպի ազդեցությունը կլիմակտերիկ շրջանի ընթացքի վրա, 5) ներկայացնի ծերացման գործընթացը օրգանիզմում տեղի ունեցող անատոմո-ֆիզիոլոգիական փոփոխությունները, հիմնական պահանջները, պահանջների բավարարման ուղիները:
Ուսումնառության արդյունք 1	Նկարագրել նորաձնային շրջանը, այս շրջանի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, նորաձնի կենսական պահանջները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պտղի և մանկան զարգացման շրջանները, 2) ճիշտ է ներկայացնում նորաձնի օրգան համակարգերի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 3) ճիշտ է նկարագրում նորաձնի կենսական պահանջները, 4) ճիշտ է ներկայացնում նորաձնի անցողիկ ֆիզիոլոգիական վիճակները և հասունության նշանները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների, դերային խաղերի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է նորաձնի առաջին հարդարանքի, ամենօրյա խնամքի կարողություններ, կառաջադրվի թեստային աշխատանքներ պտղի և մանկան զարգացման շրջանների, անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, նորաձնի հասունության նշանների, կենսական պահանջների վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • պրենատալ շրջանի առանձնահատկությունները, պտղի վրա ազդող գործոնները,

	<ul style="list-style-type: none"> • նորածնի բոլոր օրգան-համակարգերի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, • երեխայի կենսական պահանջները, զարգացման տարբեր շրջաններում: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութ, դերային խաղերի սցենարներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել անհաս նորածնի անհասության նշանները, իրագործել անհաս նորածնի խնամք և կերակրում, կրծքի հասակի երեխաների անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, զարգացման օրինաչափությունները, հիմնական պահանջները, կոփիչ միջոցառումները, սնուցման եղանակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անհաս նորածնի անհասության նշանները, անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 2) ճիշտ է կատարում անհաս նորածնի խնամք՝ պահանջների բավարարման շրջանակում /անձնական հիգիենա, մարմնի տաքացում/, 3) ճիշտ է իրագործում անհաս նորածնի կերակրում տարբեր եղանակներով՝ պահպանելով կերակրման ռեժիմը, չափաբաժինը, ջերմային ռեժիմը, 4) ճիշտ է ներկայացնում կյանքի առաջին տարում երեխայի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 5) ճիշտ է ներկայացնում հիմնական պահանջների բավարարման եղանակները /շնչել, ջերմություն, սնուցում, քուն/, 6) ճիշտ է բացատրում կրծքով կերակրման առավելությունները, 7) ճիշտ է կատարում մանկան անձնական հիգիենայի պահպանման միջոցառումները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների, դերային խաղերի և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է նորածնի խնամք պահանջների

	<p>բավարարման շրջանակներում, նորաձևի կերակրում տարբեր եղանակներով, նորաձևի անձնական հիգիենայի պահպանման միջոցառումներ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • անհաս նորաձևի անհասության նշանները, պատճառները, • անհաս նորաձևի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, • անհաս նորաձևի հիմնական պահանջների բավարարմանն ուղղված /կերակրել, տաքացնել/ կրտսեր բուժքրոջ միջամտությունները: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութ, դերային խաղերի սցենարներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել ֆիզիոլոգիական հղիության նշանները, ընթացքը, տևողությունը, հղի կնոջ հիմնական պահանջները, անձնական հիգիենան, ռացիոնալ սնուցման ռեժիմը և շարժողական ակտիվության կարևորությունը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ֆիզիոլոգիական հղիության նշանները, ընթացքը, տևողությունը, 2) ճիշտ է սահմանում հղի կնոջ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները, 3) ճիշտ է կազմակերպում և իրականացնում հղի կնոջ անձնական հիգիենան, ռացիոնալ սնուցումը, հետևում օրվա ռեժիմին, շարժողական ակտիվությանը, 4) ճիշտ է իրականացնում խնամք պերինատալ շրջանում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական հանձնարարությունների և դերային խաղի կատարման միջոցով: Ուսանողը ներկայացնում է խորհրդատվություն հղի կնոջ անձնական հիգիենայի, ռացիոնալ սնուցման, շարժողական ակտիվության վերաբերյալ:</p>

	<p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • ֆիզիոլոգիական հղիության ընթացքը և տևողությունը, • կրտսեր բուժքրոջ դերը հղի կնոջ օրվա ռեժիմի կազմակերպման ժամանակ, • կրտսեր բուժքրոջ դերը պերինատալ շրջանի խնամքի կազմակերպման ժամանակ: <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութ, դերային խաղերի սցենարներ, տեսաֆիլմեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ներկայացնել կանանց և տղամարդկանց օրգանիզմում ընթացող փոփոխությունները կլիմակտերիկ շրջանում, առողջ ապրելակերպի ազդեցությունը կլիմակտերիկ շրջանի ընթացքի վրա:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է ներկայացնում օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները կլիմակտերիկ շրջանում, 2) ճիշտ է ներկայացնում կլիմակտերիկ շրջանի սոցիալ-հոգեբանական, բժշկա-հոգեբանական խնդիրները, 3) ճիշտ է պատկերացնում առողջ ապրելակերպի ազդեցությունը կլիմակտերիկ շրջանի բարենպաստ ընթացքի վրա:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողը կատարելու է թեստային աշխատանքներ կլիմակտերիկ շրջանի, նրա սոցիալ-հոգեբանական, բժշկա-հոգեբանական խնդիրների շուրջ, գործնական առաջադրանքներ կլիմակտերիկ շրջանի վրա ազդող գործոնների բացահայտման, կլիմակտերիկ շրջանի բարենպաստ ընթացքին ուղղված միջոցառումների շուրջ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • սեռական օրգաններում տեղի ունեցող փոփոխությունները կլիմակտերիկ շրջանում, • կլիմաքսի առաջացման հետ կապված հոգեբանական խնդիրները, • առողջ ապրելակերպի ազդեցությունը /առողջ սնունդ, վնասակար սովորություններ, աշխատանքի և հանգստի

	<p>պայմաններ/ կլիմակտերիկ շրջանի ընթացքի վրա:</p> <p>Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ և հիմնավոր:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ներկայացնել ծերացման գործընթացը օրգանիզմում տեղի ունեցող անատոմո-ֆիզիոլոգիական փոփոխությունները, հիմնական պահանջները, պահանջների բավարարման ուղիները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ծերացման հիմնական տեսությունները, դասակարգում է տարիքային խմբերը, 2) ճիշտ է ներկայացնում վաղաժամ ծերությանը նպաստող գործոնները և դրանց անցանկալի հետևանքները, 3) ճիշտ է ներկայացնում տարեց, ծերունական տարիքում օրգան համակարգերի անատոմո-ֆիզիոլոգիական, հոգեբանական փոփոխությունները, 4) ճիշտ է ներկայացնում մարդու կենսագործունեության ավարտը՝ մահը, նրա փուլերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների միջոցով: Ուսանողը կատարելու է թեստային աշխատանքներ և գործնական հանձնարարություններ ծերացման հիմնական տեսությունների, տարիքային խմբերի, ծերությանը նպաստող գործոնների, ծեր օրգանիզմի անատոմո-ֆիզիոլոգիական, հոգեբանական փոփոխությունների վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • տարիքային խմբերի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, • «հերոնտոլոգիա» և «հերիատրիա» հասկացությունները, • Վաղաժամ ծերացմանը նպաստող գործոնները, • «էֆթանագիա» և «մահ» հասկացությունները:

	Արդյունքի գնահատումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, գունավոր ատլասներ, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Մ Ա Ն Ը Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն, Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ի Ր Հ Ի Գ Ի Ե Ն Ա Ե Վ Հ Ա Մ Ա Ճ Ա Ր Ա Կ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն»	
Մոդուլի դասիչը	ՀԸԽ-4-16-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել տարբերակել միկրոօրգանիզմներն ու վիրուսներն՝ ըստ իրենց հիմնական հատկանիշների, պատկերացում ունենալ իմունիտետի և նրա գործոնների, վարակի աղբյուրի, տարածման ուղիների մասին, իրականացնել վարակի տարածման կանխարգելիչ միջոցառումներ, գնահատել սանիտարահիգիենիկ վիճակը, հիգիենիկ և համաճարակային հսկողության կարգը, վարակազերծումը, վարակազերծման տեսակները, վարակի օջախում հակահամաճարակային միջոցառումների տեսակները, ներհիվանդանոցային վարակների կանխարգելման հիմնական ուղիները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 28 ժամ գործնական աշխատանք՝ 44 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) նկարագրի միկրոօրգանիզմներն իրենց ձևաբանական, կենսաքիմիական հատկանիշների, ախտածին միկրոօրգանիզմների փոխանցման ուղիները, կանխարգելիչ միջոցառումները, 2) ներկայացնի աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցիչի առանձնահատկությունները,

	<p>փոխանցման ուղիները, կանխարգելիչ միջոցառումները,</p> <p>3) ներկայացնի զոոնոզ ինֆեկցիաների հարուցիչների և վիրուսների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները և կանխարգելիչ միջոցառումները,</p> <p>4) ներկայացնի օդը, հողը, ջուրը, որպես հնարավոր վարակի աղբյուր,</p> <p>5) ներկայացնի սննդի հիգիենան,</p> <p>6) ներկայացնի համաճարակային միջոցառումները վարակիչ հիվանդությունների օջախում,</p> <p>7) ներկայացնի վարակազերծումը և ներհիվանդանոցային վարակների կանխարգելումը:</p>
Ուսումնառության արդյունք 1	Նկարագրել միկրոօրգանիզմներն իրենց ձևաբանական, կենսաքիմիական հատկանիշների, ախտածին միկրոօրգանիզմների փոխանցման ուղիները, կանխարգելիչ միջոցառումները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում միկրոօրգանիզմների դերը և գործնական նշանակությունը մարդու կյանքում,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման կանոնները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում առավել հաճախ հանդիպող ախտածին մանրէների տեսակները, առաջացրած հիվանդությունները և կանխարգելիչ միջոցառումները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է 4 պատասխաններից ճիշտ պատասխանը: Թեստում ընդգրկված են լինելու հարցեր մարդու կյանքում միկրոօրգանիզմների դերի և գործնական նշանակության, հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման, առավել հաճախ հանդիպող ախտածին մանրէների տեսակների, առաջացրած հիվանդությունների և կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • հետազոտվող նյութի հավաքման և տեղափոխման կարգը տարբեր միջավայրերից, • առավել հաճախ հանդիպող ախտածին մանրէների առանձնահատկությունները, • կանխարգելիչ միջոցառումների տեսակները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ

	ցուցադրական նյութեր, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր: Նպատակահարմար է պարապմունքի մի մասն անցկացնել համապատասխան լաբորատորիայում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել աղիքային բակտերիաների ընտանիքի, մալարիայի հարուցիչի առանձնահատկությունները, փոխանցման ուղիները, կանխարգելիչ միջոցառումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է նկարագրում աղիքային վարակները, տարածման ուղիները, կանխարգելումը, աղիքային վարակով հիվանդի խնամքի առանձնահատկությունները, 2) ճիշտ է նկարագրում խոլերայի վիրուսը, առաջացրած հիվանդությունը և կանխարգելումը, 3) ճիշտ է նկարագրում մալարիայի պլազմոդիումի փոխանցման ուղիները, առաջացրած հիվանդությունը և կանխարգելումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է 4 պատասխաններից ճիշտ պատասխանը: Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասները՝ <ul style="list-style-type: none"> • աղիքային վարակներ առաջացնող հարուցիչների տեսակները, • խոլերայի կանխարգելման առանձնահատկությունները, • մալարիայի պլազմոդիումի տեսակները, փոխանցման ուղիները, առանձնահատկությունները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, համապատասխան լաբորատոր սարքավորումներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել զոռնոզ ինֆեկցիաների հարուցիչների և վիրուսների առանձնահատկությունները, փոխանցման ուղիները և կանխարգելիչ միջոցառումները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բրուցելլաները, առաջացրած հիվանդությունը և կանխարգելումը, 2) ճիշտ է ներկայացնում սիբիրախտի հարուցիչը, առաջացրած հիվանդությունը և կանխարգելումը, 3) ճիշտ է նկարագրում վիրուսների հիմնական առանձնահատկությունները, առաջացրած հիվանդությունները և կանխարգելումը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է 4 պատասխաններից ճիշտ պատասխանը: Թեստում ընդգրկված են լինելու հարցեր զոռնոզ ինֆեկցիաների հարուցիչների, նրանց առաջացրած հիվանդությունների, սիբիրախտի հարուցիչի, առաջացրած հիվանդության, վիրուսների հիմնական առանձնահատկությունների, առաջացրած հիվանդությունների, նկարագրված հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • բրուցելլաների տարածման ուղիները, վարակի աղբյուրները, կանխարգելումը, • սիբիրախտի հարուցիչի տարածման ուղիները, վարակի աղբյուրը, կանխարգելումը, • կանխարգելման նպատակով կիրառվող վակցինաները և իմուն շիճուկները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պաստառներ, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, համապատասխան լաբորատոր սարքավորումներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել օդը, հողը, ջուրը, որպես հնարավոր վարակի աղբյուր
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում վարակի օդակաթիլային փոխանցման ուղին, 2) ճիշտ է ներկայացնում վարակի օրալ-ֆեկալ փոխանցման ուղին,

	<p>3) ճիշտ է ներկայացնում ջրի միջոցով տարածվող վարակիչ հիվանդությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հողի միջոցով տարածվող վարակիչ հիվանդությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է 4 պատասխաններից ճիշտ պատասխանը: Թեստում ընդգրկված են լինելու հարցեր վարակի օդա-կաթիլային, օրալ-ֆեկալ փոխանցման ուղիների, հողի, ջրի միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունների վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • օդա-կաթիլային ճանապարհով փոխանցվող վարակների առանձնահատկությունները, • օրալ-ֆեկալ ճանապարհով փոխանցվող վարակների առանձնահատկությունները, • ջուրը որպես վարակի աղբյուր, • հողը որպես վարակի աղբյուր: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր, համապատասխան լաբորատոր սարքավորումներ, գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել սննդի հիգիենան
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է նկարագրում սպիտակուցների, ածխաջրերի, ճարպերի վիտամինների, հանքային աղերի հիգիենիկ նշանակությունը օրգանիզմի համար,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում անհրաժեշտ սննդամթերքների օգտագործումը, դրանց ֆիզիոլոգիական նորմերը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում սննդային թունավորումների առաջացման պատճառները և կանխարգելումը,</p> <p>4) ճիշտ է նկարագրում սննդամթերքի տեղափոխման, պահպանման և օգտագործման հիգիենիկ պահանջները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է 4 պատասխաններից ճիշտ պատասխանը: Թեստում ընդգրկված են լինելու ռացիոնալ սննդի, անհրաժեշտ</p>

	<p>սննդամթերքների ֆիզիոլոգիական նորմերի, սննդային թունավորումների, սննդամթերքի տեղափոխման, պահպանման և օգտագործման նորմերի վերաբերյալ հարցեր:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • գերսնուցման, թերսնուցման հետևանքով առաջացած հիվանդություններ, • սննդային թունավորումների դասակարգումը, • սննդամթերքի պահպանման, տեղափոխման, բաշխման առանձնահատկությունները ստացիոնարում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, աղյուսակներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել համաճարակային միջոցառումները վարակիչ հիվանդությունների օջախում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում համաճարակաբանության խնդիրները, 2) ճիշտ է նկարագրում վարակի աղբյուրը, փոխանցման ուղիները, 3) ճիշտ է ներկայացնում համաճարակի տարածման ուղիները, 4) ճիշտ է կատարում հիվանդ մարդու և կոնտակտավորների նկատմամբ ձեռնարկվող միջոցառումները, 5) ճիշտ է կատարում արտաքին միջավայրի նկատմամբ ձեռնարկվող միջոցառումները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է 4 պատասխաններից ճիշտ պատասխանը: Թեստերում ընդգրկված են լինելու համաճարակաբանության խնդիրների, հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության, տվյալ վարակային հիվանդության նկատմամբ ազգաբնակչության ընկալունակության, հակահամաճարակային միջոցառումների իրագործման վերաբերյալ հարցեր:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • համաճարակային գործընթացի երեք օղակները՝ վարակի աղբյուր, փոխանցման ուղիներ, ընկալություն,

	<ul style="list-style-type: none"> կրտսեր բուժքրոջ դերը հիվանդ մարդու և կոնտակտավորների նկատմամբ ձեռնարկվող միջոցառումներում, կրտսեր բուժքրոջ դերը արտաքին միջավայրի նկատմամբ ձեռնարկվող միջոցառումներում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել վարակազերծումը և ներհիվանդանոցային վարակների կանխարգելումը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում վարակազերծումը, դրա ձևերը, 2) ճիշտ է կատարում կանխարգելիչ վարակազերծում, 3) ճիշտ է կատարում ընթացիկ վարակազերծում, 4) ճիշտ է կատարում եզրափակիչ վարակազերծում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ախտահանիչ միջոցների աշխատանքային լուծույթների պատրաստման ունակություններ, կատարելու է կանխարգելիչ, ընթացիկ, եզրափակիչ վարակազերծում:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • ներհիվանդանոցային վարակի կանխարգելման միջոցառումներ, • պատրաստում է ախտահանիչ լուծույթներ ձեռքերի, օգտագործված գործիքների, տարբեր մակերեսների, լաբորատոր սպասքի, հատակի ախտահանման համար: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե հիմնականում ուսանողը առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ախտահանիչ լուծույթներ, անհրաժեշտ սպասք, ձեռնոցներ, տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀԸԽ-4-16-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել դեղ հասկացության բնութագիրը, դեղորայքի ձևերը, ձեռք բերել ունակություններ պահպանելու դեղաչափը, դեղանյութի ընդունման ռեժիմը հիվանդի խնամքի շրջանակներում:
Մոդուլի տևողությունը	18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) տարբերակի և ցուցադրի դեղորայքային ձևերը, 2) ձեռք բերի դեղորայքի ընդունման հսկողության ունակություններ, հիվանդի խնամքի շրջանակներում:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել և ցուցադրել դեղորայքային ձևերը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է խմբավորում դեղերի տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում դեղորայքային ձևերի կիրառման և պահպանման պայմանները, 3) ճիշտ է ներկայացնում դեղանյութի ներմուծման ուղիները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը դեղերի բազմությունից խմբավորելու է կարծր, հեղուկ, փափուկ դեղաձևերը: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ <ul style="list-style-type: none"> • կարծր դեղաձևեր, կիրառման առանձնահատկությունները, պահպանման պայմանները, • հեղուկ դեղաձևեր, տեսակները, կիրառման առանձնահատկությունները, պահպանման պայմանները,

	<ul style="list-style-type: none"> փափուկ դեղաձևեր, կիրառման առանձնահատկությունները, պահպանման պայմանները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ցուցադրական նմուշներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ձեռք բերել դեղորայքի ընդունման հսկողության ունակություններ, հիվանդի խնամքի շրջանակներում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում դեղանյութի ընդունման ռեժիմ հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում դեղորայքի ընդունման չափաբաժին հասկացությունը, 3) ճիշտ է ներկայացնում գերդոզավորումից առաջացած թունավորման նշանները, 4) ճիշտ է կազմակերպում և իրագործում առաջին նախաբժշկական օգնություն դեղորայքի գերդոզավորումից առաջացած թունավորման ժամանակ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը կատարում է թեստային աշխատանք և գործնական հանձնարարություններ դեղորայքի չափաբաժնի, ընդունման ռեժիմի, գերդոզավորումից առաջացած թունավորման նշանների, դրանց ժամանակ առաջին նախաբժշկական օգնության ցուցաբերման վերաբերյալ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • օրգանիզմում առաջացած փոփոխությունները դեղորայքի կրկնակի և զուգորդված ներմուծման ժամանակ, • դեղորայքի ընդունումից առաջացած կողմնակի երևույթներ /ընտելացում, գերզգայնություն, կախվածություն, կուտակում/, • դեղերի ներմուծման և արտազատման ուղիները, • ստամոքսի լվացում, գերդոզավորման դեպքում անտիդոտների կիրառում, նախաբժշկական օգնության

	<p>հիմունքներ:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ցուցադրական նմուշներ, տեսանյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀԸԽ-4-16-005
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական բարոյա-հոգեբանական մոտեցում, մասնագիտական էթիկա և դեոնտոլոգիա:
Մոդուլի տևողությունը	18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի հոգեբանությունը որպես գիտություն, մարդու հոգեկան ակտիվության մակարդակները, 2) ներկայացնի ընկալման, հիշողության, հույզերի և զգացմունքների, երևակայության ընդհանուր բնութագրերը, 3) ներկայացնի ընդունակությունների, խառնվածքի, բնավորության նկարագրերը, ինչպես նաև սթրեսների, ֆրոստրացիաների դերը աշխատանքային գործընթացում, 4) ներկայացնի դեոնտոլոգիական նորմերը, մարդկանց փոխհարաբերությունների էթիկան, յաթրոգենիա:

Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հոգեբանությունը որպես գիտություն, մարդու հոգեկան ակտիվության մակարդակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հոգեբանությունը որպես գիտություն, նպատակները, հիմնական բնագավառները, կապը այլ գիտությունների հետ, 2) ճիշտ է ներկայացնում գիտակցության և ենթագիտակցության հոգեբանական բնութագրերը, 3) ճիշտ է ներկայացնում ուշադրության և զգայությունների ընդհանուր բնութագրերը, տեսակները, առանձնահատկությունները և ֆիզիոլոգիական մեխանիզմները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը գործնական հանձնարարություններ կատարելիս բաժանողական նյութերի և իրավիճակային խնդիրների միջոցով ներկայացնելու է հոգեբանությունը որպես գիտություն, գիտակցության, ենթագիտակցության հոգեբանական բնութագիրը, բնավորության գծերը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • հոգեբանության հետազոտման մեթոդները, • անձի հոգեբանական բնութագիրը, անհատ, առանձնահատկություն, անձնավորություն: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ցուցադրական նմուշներ, հոգեբանական խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ընկալման, հիշողության, հույզերի և զգացմունքների, երևակայության ընդհանուր բնութագրերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ընկալումը, նրա տարրերը, հիմնական առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում հիշողությունը, տեսակները և գործընթացները, 3) ճիշտ է ներկայացնում հույզերի և զգացմունքների գործառույթները, նրանց առանձնահատկությունները,

	<p>4) ճիշտ է տարբերում հուզական տարբեր վիճակները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում երևակայության ընդհանուր բնութագիրը, տեսակները և դերը ստեղծագործական աշխատանքում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը գործնական հանձնարարություններ կատարելիս բաժանողական նյութերի և իրավիճակային խնդիրների միջոցով ներկայացնելու է ընկալման, հիշողության, հույզերի և զգացմունքների, երևակայության ընդհանուր բնութագիրը, տեսակները:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • հուզական վիճակների նկարագիրը, հույզերի կառավարումը, • հիշողության տեսակների նկարագիրը, առանձնահատկությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ցուցադրական նմուշներ, հոգեբանական և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել ընդունակությունների, խառնվածքի, բնավորության նկարագրերը, ինչպես նաև սթրեսների, ֆրուստրացիաների դերը աշխատանքային գործընթացում</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ընդունակությունների ընդհանուր բնութագիրը, տեսակները, կառուցվածքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում խառնվածքի ընդհանուր բնութագիրը, տիպերը, կապը հոգեկան այլ հատկությունների հետ,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում բնավորության ընդհանուր բնութագիրը, գծերը և կապը վարքի հետ, ինչպես նաև բնավորության ընդգծված տիպերը,</p>

	4) ճիշտ է ներկայացնում սթրեսը, ֆրուստրացիան, անձի հարմարվողականությունը, հոգեբանական ինքնապաշտպանությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը գործնական հանձնարարություններ կատարելիս ներկայացնելու է ընդունակությունների ընդհանուր բնութագիրը, խառնվածքի տիպերը, կապը հոգեկան այլ հատկությունների հետ, բնավորության գծերը, բնավորության ընդգծված տիպերը, սթրեսը, ֆրուստրացիան, անձի հարմարողականությունը, հոգեբանական ինքնապաշտպանությունը: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ <ul style="list-style-type: none"> բնավորության տիպերը, բնավորության արտահայտված գծերը, սթրեսը որպես ինքնապաշտպանական ռեակցիա: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, ցուցադրական նմուշներ, հոգեբանական և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել դեոնտոլոգիական նորմերը, մարդկանց փոխհարաբերությունների էթիկան, յաթրոգենիա
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դեոնտոլոգիական նորմերի պահպանումը հիվանդի խնամքը կազմակերպելիս, 2) ճիշտ է ներկայացնում հոգեպրոֆիլակտիկ միջոցառումները, 3) ճիշտ է ներկայացնում խնամող-հիվանդ միջանձնային փոխհարաբերությունները, առանձնահատկությունները, հաղորդակցման բաղադրամասերը, 4) ճիշտ է ներկայացնում խոսքի հոգեբանական ազդեցությունը անձի վրա, յաթրոգենիա:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը գործնական հանձնարարություններ կատարելիս բաժանողական նյութերի և իրավիճակային խնդիրների միջոցով

	<p>ներկայացնելու է հիվանդի խնամքը իրագործելիս դեռնտոլոգիական նորմերի պահպանումը, հոգեպրոֆիլակտիկ միջոցառումները ,հաղորդակցման բաղադրամասերը, խոսքի հոգեբանական ազդեցությունը անձի վրա:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • դեռնտոլոգիական նորմերը բժիշկ-բուժքույր-կրտսեր բուժքույր փոխհարաբերությունում, • յաթրոգեն հիվանդություններ, դրանց կանխումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՆՈՒՅՈՒՄ՝ ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴ ԵՎ ԴԻԵՏՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	<ԸԽ-4-16-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել պացիենտի սնուցման կազմակերպման առանձնահատկությունները, սննդի բաղադրությունը, էներգետիկ արժեքը, ռացիոնալ, համարժեք, դիետիկ սնուցման սկզբունքները, պացիենտի կերակրման եղանակները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի սննդի բաղադրությունը և էներգետիկ արժեքը, ռացիոնալ, համարժեք, դիետիկ սնուցման սկզբունքները, 2) ներկայացնի դիետիկ սնուցման առանձնահատկությունները /դիետ սեղաններ/, պացիենտի համապատասխան սնուցման կազմակերպումը, 3) ներկայացնի ծանր հիվանդների սնուցման կազմակերպումը /կերակրումը գդալով, խմոցով/, արհեստական սնուցման ձևերը, կիրառման ցուցումները:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել սննդի բաղադրությունը և էներգետիկ արժեքը, ռացիոնալ, համարժեք, դիետիկ սնուցման սկզբունքները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սննդի բաղադրությունը, սպիտակուցների, ածխաջրերի ճարպերի նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում սննդի էներգետիկ արժեքը /կալորիականությունը/, 3) ճիշտ է ներկայացնում ռացիոնալ, համարժեք և դիետիկ սնուցման սկզբունքները, 4) ճիշտ է ներկայացնում ջրաաղային հավասարակշռության պահպանման կարևորությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային աշխատանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը թեստային աշխատանքներ և գործնական հանձնարարություններ կատարելիս ներկայացնելու է սննդի բաղադրությունը, էներգետիկ արժեքը, ռացիոնալ, համարժեք, դիետիկ սնուցման սկզբունքները, օրգանիզմի ջրաաղային հավասարակշռությունը, լուծելու է իրավիճակային խնդիրներ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • սպիտակուցների, ածխաջրերի, ճարպերի էներգետիկ արժեքի հաշվարկը, • ռացիոնալ, համարժեք, դիետիկ սնուցման առանձնահատկությունները, • ջրի դերը օրգանիզմի նորմալ գործունեության համար: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել դիետիկ սնուցման առանձնահատկությունները /դիետ սեղաններ/, պացիենտի համապատասխան սնուցման կազմակերպումը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում դիետ սնուցման անհրաժեշտությունը, 2) ճիշտ է ներկայացնում անկողնային ռեժիմում գտնվող հիվանդի էներգետիկ պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում պացիենտի սնուցման կազմակերպումը ստացիոնարում, 4) ճիշտ է տանում պացիենտի և ընտանիքի անդամների հետ բացատրական աշխատանք:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային աշխատանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը թեստային աշխատանքների և գործնական հանձնարարությունների միջոցով ներկայացնելու է անկողնային ռեժիմում գտնվող հիվանդի էներգետիկ պահանջները, պացիենտի սնուցման կազմակերպումը ստացիոնարում, պացիենտի և նրա հարազատների կրթումը, լուծելու է իրավիճակային խնդիրներ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • էներգետիկ պահանջ հասկացությունը և նրա հաշվարկը, • դիետ սեղանների նշանակությունը տարբեր օրգան համակարգերի հիվանդությունների ժամանակ, • դիետ սեղանների առանձնահատկությունները, <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ծանր հիվանդների սնուցման կազմակերպումը /կերակրումը գդալով, խմոցով/, արհեստական սնուցման

	ձևերը, կիրառման ցուցումները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պացիենտի սնուցման կազմակերպումը ստացիոնարում, տանը, 2) ճիշտ է իրականացնում ծանր հիվանդների կերակրումը անկողնում գդալով, խմոցով, 3) ճիշտ է ներկայացնում արհեստական սնուցման եղանակները, դրանց կիրառման ցուցումները, 4) ճիշտ է իրականացնում արհեստական սնուցում զոնդով, սնուցող հոգնայի, գաստրոստոմի միջոցով:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային աշխատանքների և գործնական հանձնարարությունների կատարման միջոցով: Ուսանողը թեստային աշխատանքների և գործնական հանձնարարությունների միջոցով ներկայացնելու է պացիենտի սնուցում՝ ծանր հիվանդի կերակրում տարբեր եղանակներով, արհեստական սնուցման եղանակները, սնուցող հոգնաները, լուծելու է իրավիճակային խնդիրներ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ծրագրային մանրամասներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Ստացիոնարում սննդի պատրաստման, տեղափոխման, բաշխման առանձնահատկությունները, • Ծանր հիվանդի կերակրումը անկողնում նստած, պարկած վիճակում, • Արհեստական սնուցումից հետո զոնդերի և այլ պարագաների լվացումը, մանրէազերծումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, զոնդեր, անհրաժեշտ սպասք, հոգնայի համար անհրաժեշտ պարագաներ, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԻՎԱՆԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԱՄՔ»	
Մոդուլի դասիչը	ՀԸԽ-4-16-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ բազային

	գիտելիքներ, կրտսեր բուժքրոջ գործառույթների, մանրէազերծման, պարզագույն ֆիզիոթերապևտիկ միջամտությունների, դեղերի ներմուծման եղանակների, հոգնաների, մարմնի բիոմեխանիկայի, մեջքի, ողնաշարի վնասվածքներով, պառկելախոցերով պացիենտների խնամքի իրականացման հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 58 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՐԽ-4-16-001 «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի քույրական գործի պատմությունը և տեսությունը, մարդու կենսական պահանջները կրտսեր բուժքրոջ գործառույթները, տիրապետի քույրական խնամքի հմտություններին, 2) ներկայացնի «ներհիվանդանոցային վարակ» հասկացությունը, կանխարգելման միջոցները, 3) ներկայացնի «ախտանհանում» հասկացությունը, նրա տեսակները, ձևերը, եղանակները, «մանրէազերծում», «նախամանրէազերծում» հասկացությունները, տիրապետել ախտահանման, մանրէազերծման, նախամանրէազերծման գործընթացներին, 4) ներկայացնի «մարմնի բիոմեխանիկա» հասկացությունը, 5) ներկայացնի և իրականացնի պարզագույն ֆիզիոթերապևտիկ միջամտություններ, ներկայացնել օրգանիզմ դեղերի ներմուծման ուղիներն ու եղանակները, 6) ներկայացնի գազահան խողովակի կիրառման և տարբեր հոգնաների կատարման տեխնիկան, 7) ներկայացնի պացիենտի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը՝ պուլսի, զարկերակային ճնշման, շնչառության, ջերմության չափումը: Ներկայացնի տենդի տեսակները և պացիենտի խնամքը տենդի տարբեր շրջաններում:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել քույրական գործի պատմությունը և տեսությունը, մարդու կենսական պահանջները կրտսեր բուժքրոջ

	գործառույթները, տիրապետել քույրական խնամքի հմտություններին
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում քույրական գործի պատմությունը և տեսությունը, 2) ճիշտ է ներկայացնում կրտսեր բուժքրոջ առաքելությունը, նրա գործառույթները, 3) ճիշտ է ներկայացնում մարդու կենսական կարևոր պահանջները, 4) ճիշտ է ներկայացնում մարդու կենսական պահանջների դասակարգումը, 5) ճիշտ է ներկայացնում կրտսեր բուժքրոջ գործառույթները պացիենտի կենսական պահանջների բավարարման հարցում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստային աշխատանքների միջոցով: Ուսանողն ընտրելու է չորս պատասխանից ճիշտը: Թեստային աշխատանքներում ընդգրկվելու են քույրական գործի պատմությունը և տեսությունը, կրտսեր բուժքրոջ առաքելությունը և գործառույթները, մարդու կենսական պահանջների դասակարգումը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • կրտսեր բուժքրոջ գործառույթները պացիենտի խնամքի հարցում՝ տնային պայմաններում և ստացիոնարում, • պացիենտի պահանջները, խնդիրները, խնամքի նպատակները, տեսակները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, թեստեր, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել «ներհիվանդանոցային վարակ» հասկացությունը, կանխարգելման միջոցները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում «ներհիվանդանոցային վարակ» հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում ինֆեկցիոն գործընթացը, ինֆեկցիոն գործընթացի շղթան, 3) ճիշտ է իրագործում ներհիվանդանոցային վարակի կանխարգելմանն ուղղված նախազգուշական համընդհանուր

	<p>միջոցները,</p> <p>4) ճիշտ է իրականացնում սանիտարահիգիենիկ միջոցառումները իր լիազորությունների շրջանակում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ներկայացնելու է ներհիվանդանոցային վարակ հասկացությունը, ինֆեկցիոն գործընթացը, ինֆեկցիոն գործընթացի շղթան, ներհիվանդանոցային վարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, սանիտարահիգիենիկ միջոցառումները իր լիազորության շրջանակներում:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • ներհիվանդանոցային վարակի ռիսկի խմբերը, • տիրոջ ընկալության վրա ազդող գործոնները, • ձեռքերի լվացման մակարդակները, • արյան և կենսաբանական հեղուկների հետ աշխատելիս նախազգուշական միջոցների կիրառում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել «ախտանհանում» հասկացությունը, նրա տեսակները, ձևերը, եղանակները, «մանրէազերծում», «նախամանրէազերծում» հասկացությունները, տիրապետել ախտահանման, մանրէազերծման, նախամանրէազերծման գործընթացներին</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում «ախտանհանում» հասկացությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ախտահանման տեսակները, ձևերը, եղանակները,</p> <p>3) ճիշտ է իրականացնում ախտահանիչ լուծույթի պատրաստումը և կիրառումը՝ պահպանելով անվտանգության</p>

	<p>կանոնները,</p> <p>4) ճիշտ է իրականացնում բժշկական գործիքների, սարքերի և տարածքների ախտահանումը,</p> <p>5) ճիշտ է իրականացնում գործիքների նախամանրէազերծումը,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում մանրէազերծման մեթոդները, միջոցները, եղանակները, ռեժիմները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է ախտահանիչ լուծույթների պատրաստումը և կիրառումը, բժշկական գործիքների, սարքերի, խնամքի պարագաների, տարածքների ախտահանումը, գործիքների նախամանրէազերծումը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • «ախտահանում» հասկացության էությունը, • ախտահանման տեսակները, ձևերը, եղանակները, • անվտանգության կանոնները լուծույթները պատրաստելիս և կիրառելիս: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել «մարմնի բիոմեխանիկա» հասկացությունը</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում «մարմնի բիոմեխանիկա» հասկացությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում կրտսեր բուժքրոջ մարմնի դիրքը նստած, կանգնած վիճակում և ծանրություն տեղափոխելիս,</p> <p>3) ճիշտ է իրականացնում պացիենտի տեղափոխումը մահճակալից աթոռին և հակառակը, մահճակալից պատգարակին և հակառակը,</p>

	<p>4) ճիշտ է իրականացնում հիվանդի տեղաշարժումը անկողնում,</p> <p>5) ճիշտ է իրականացնում անկողնային անշարժ հիվանդի անկողնային և անձնական սպիտակեղենի փոխումը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ցուցադրելու է մարմնի բիոմեխանիկան նստած, կանգնած դիրքում, ծանրություն տեղափոխելիս, պացիենտի տեղափոխումը մահճակալից աթոռին և հակառակը, մահճակալից պատգարակին և հակառակը, հիվանդի տեղաշարժումը անկողնում, անկողնային անշարժ հիվանդի անկողնային և անձնական սպիտակեղենի փոխումը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • մեջքի մկանների և ողնաշարի վնասվածքների պատճառները, • հիվանդի տեղաշարժումը անկողնում (կողքի վրա, փորի վրա, Սիմսի դիրք, Ֆաուլերի դիրք, մահճակալի եզրին, դեպի գլխամաս): <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ և հիմնավոր:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մուլյաժներ, անկողին, պատգարակ, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, իրավիճակային խնդիրներ, դերային խաղերի սցենարներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ներկայացնել և իրականացնել պարզագույն ֆիզիոթերապևտիկ միջամտություններ, ներկայացնել օրգանիզմ դեղերի ներմուծման ուղիներն ու եղանակները</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կիրառում տաք և սառը թրջոցներ, ջեռակ, սառցեպարկ, կոմպրեսներ,</p> <p>2) ճիշտ է իրականացնում նշանակված թթվածնաբուժությունը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնները թթվածնի հետ աշխատելիս:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը ներկայացնելու է</p>

	<p>սառը թրջոցների, տաք և տաքացնող կոմպրեսների, ջեռակ և սառցեպարկ դնելու, նշանակված թթվածնաբուժությունը իրականացնելու ունակություններ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝</p> <ul style="list-style-type: none"> • պարզագույն ֆիզիոթերապևտիկ միջոցառումների տեսակները, հակացուցումները, հնարավոր բարդությունները, • թթվածնաբուժություն թթվածնի կաթետերով, կանյուլայով, դիմակով, բարձով, • ջրաբուժության տարբեր միջամտություններ, • տաք և սառը թրջոցների, ջեռակի, սառցեպարկի, կոմպրեսների կիրառում մարմնի տարբեր հատվածներում: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հիմնականում հանձնարարությունները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, բաժանողական նյութեր, համապատասխան ուսումնական, մեթոդական և տեղեկատվական գրականություն, իրավիճակային խնդիրներ, տեսաֆիլմեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	<p>Ներկայացնել գազահան խողովակի կիրառման և տարբեր հոգնանների կատարման տեխնիկան</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հոգնանների տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում հոգնանների կատարման ընթացքում հնարավոր բարդությունները և իրականացնում դրանց կանխարգելումը, 3) ճիշտ է տիրապետում տարբեր տեսակի հոգնանների կատարման տեխնիկային, 4) ճիշտ է տիրապետում գազահան խողովակի դրման տեխնիկային տարբեր տարիքային խմբերում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողը գործնական առաջադրանքների միջոցով ներկայացնելու է հոգնանների տեսակները, կատարման տեխնիկան, նպատակը, ցուցումները, հակացուցումները, գազահան խողովակի դրման տեխնիկան, ցուցումները, հակացուցումները,</p>

